

ԱՎԱԳ ՇԱԲԱԹՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի ևս Մայր Աթոռում ավանդական շուքով կատարվեցին Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին յոթնյակի կամ Ավագ Շաբաթն նվիրված եկեղեցական արարողություններն ու հոգևոր հանդիսությունները:

Ավագ Շաբաթը իր խորհրդով ու կրոնական նշանակությամբ, աստվածաշնչական ընթերցումներով, հոգեգրավ շարականներով, որոնք Ս. Սահակ Պարթևի գրչին են պատկանում, մեր Եկեղեցու, ինչպես նաև ողջ քրիստոնեության համար հանդիսանում է կարևորագույն և սրբազան յոթնյակը, որպես Քրիստոսի Չարչարանքների և Խաչելության, Հարության և Հաղթանակի շաբաթը:

Ավագ Շաբաթը, ըստ մեր եկեղեցական տոնացույցի, սկսվում է կիրակի օրը, Ծաղկազարդի կամ Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի տոնակատարությամբ և ավարտվում է հաջորդ կիրակի օրը, Փրկչի հրաշափառ Հարության կամ Զատկի արարողությամբ:

Ապրիլի 11, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Վաղ առավոտվանից բազմահազար ուխտավորներ, եկած Երևանից, հանրապետության գանազան շրջաններից և միութենական այլ քաղաքներից, լցրել են Մայր տաճարն ու մայրավանքի շրջափակը:

Գարնանային պայծառ առավոտ էր: Հայրենի բնությունը ևս վերակենդանության շնչով ու բույրով էր հագեցած:

Ժամը 11-ին հնչում են Մայր տաճարի զանգերը՝ ավետելով Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Վեհարանում Հայոց Հայրապետը, զգեստավորված, եկեղեցական թափորով, զանգերի տոնական զողանջների ներքո, հանդիսավորապես և խուռներամ հավատացյալների խանդավառ արտահայտությունների ներքո, առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական սուրբ պատարագը:

Մայր տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալներով:

Տաճարի Ավագ բեմի դիմաց, ատյանի կենտրոնում, տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պատասխանատու աշխատողները, իսկ ձախակողմյան դասում՝ ուխտավորներ, այլ հրավիրյալներ և շուրջ 300 արտասահմանցի հայ ուսանողներ:

Ս. պատարագին ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ս. Սեղանին սպասարկում են Մայր Աթոռի միաբան վարդապետներն ու սարկավագները:

Ս. պատարագը շարունակվում է հանդիսավորությամբ մինչև «Հայր մեր»:

Քարոզի պահն է: Հայոց պատարագիչ Հայրապետը, տալով Քրիստոսի Հարության կենդանարար ավետիսը, շնորհավորում է համայն հայության, որ ի հայրենիս և ի ընդարձակ աշխարհի, Զատիկը և խոսում ոգեշունչ և գեղեցկահյուս մի քարոզ՝ նվիրված օրվա մեծ տոնին և նրա խորհրդին:

Նույն օրը, երեկոյան ժամը 24-ին, Հայոց Հայրապետի զատկական քարոզը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայոց Հայրապետի՝ Քրիստոսի Հարու-

թյան նվիրված քարոզը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Ս. պատարագի ավարտին հավատացյալներից շատերը երկյոտված բարեպաշտությամբ Ս. Հաղորդություն են ստանում Հայոց Հայրապետի ձեռքից:

Եկեղեցական արարողությունից հետո Հայոց Հայրապետը թափորով առաջնորդվում է Վեհարան, որտեղ մի անգամ ևս շնորհավորում է հայ ժողովրդի և մանավանդ Վեհարանում ներկա սփյուռքահայ ուսանողների Հարության տոնը, որոնք եկել էին աջահամբույրով ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունն ու լսելու իրենց ուղղյալ հայրապետական պատգամը:

Հայոց Հայրապետի Ս. Հարության տոնը շնորհավորելու էր եկել նաև հյուրաբար Երևանում գտնվող Իսպանիայի արտակարգ և լիազոր-դեսպան մեծահարգ Լուիս Գիլեռմո Պերինատը:

Ժամը 15-ին, օրվա մեծ տոնի առիթով, Վեհարանի սեղանատանը տրվում է ավանդական պատկական ճաշկերույթ, որին մասնակցում են 30 հրավիրյալներ:

Զատկական ճաշկերույթին ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի ղեկավար պաշտոնյաները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի և Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները:

Ճաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետի պատկական տոնը ջերմորեն շնորհավորում են Տ. Հուսիկ, Տ. Արսեն սրբալանները, հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եվնիկ քհն. Պետրոսյանը, ճարտարապետ դոկտ. Վարազդատ Հարությունյանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի նախագահ գրող Վալտեր Արամյանը:

Հայոց Հայրապետին շնորհավորում է նաև, օրվա տոնի առիթով, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռի պայծառության ու անսասանության համար:

Վերջում Հայոց Հայրապետը շնորհակալության և օրհնության խոսք է ասում արտահայտված ջերմ և ազնիվ շնորհավորանքների համար և բաժակ բարձրացնում բոլոր ներկաների քաջառողջության և նրանց եկեղեցասնվեր ու հայրենաշեն գործերի հաջողության համար:

Զատկական սուրբ սեղանն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աղոթքով: